ՄԵՌԱՆՈՂ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

(ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊՈՊ-ից)

Արծիւեանի

Երկնային գո՛ւ կայծ, վեհաշունչ հոգի,
Թօթափի՛ր քեզնից այդ քունը մահւան,
Քուն տկար մարմնի, քուն երկչոտութեան.
Դա ոնմիտ խաղ է չարաշուք բաղդի...
Այժմ քո ժամն է, ո՛վ վսեմ հոգի.
Փշրի՛ր կաշկանդող շղթան բընութեան
Եւ թռի՛ր դէպի սուրբ ազատութեան
Աղբիւրն անսպառ—աղբիւր նո՛ր կեանքի։

Լսի՛ր, տե՛ս քո շուրջ սուրբ հրեշտակներ
Երգում են և քեզ տալիս քաղցր աւետ.
«Դէպի մեզ, քուրի՛կ, թռի՛ր դու մեզ հետ...»
Եւ մթնանում են իմ պայծառ աչեր...
Շունչս կարւում է... ոյժերրս հատնում.
Խօսում եմ անկապ, խլւած իմ ուշքից...
Օ՛հ, ասա՛, հոգի՛, փարատի՛ր դու ինձ.
Մթթէ սորան չեն մարդիկ մահ կոչում։

Թռչում է երկիր... թռչում, սլանում...
Բայց ահա նա էլ ծածկւեց իմ աչքից.
Էլ բան չեմ տեսնում, բացի երկնքից,
Այնտեղ սերովբէք տագեր են հիւսում.
Ուզում եմ թռչել... և՛ ես ձեզ նման.
Դուք, ազա՛տ ոգիք, տւէ՛ք ինձ թեւեր...
Ա՛խ, ուր է, ո՛վ մահ, սուրբդ մահաբեր,
Ո՞ւր յաղթանակդ, մոտ՛լ գերեզման...

Մոսկւա. 28 սեպտեմբերի, 1889 թ.։